

**„ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,,
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՒՆԵՎՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք.Երևան

01.04.2016թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կոլեկտիվ պայմանագրի կողմեր են հանդիսանում «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս ռեկտոր Վ.Բ.Առաքելյանի (հետագայում «Գործատու») և աշխատողների կոլեկտիվը, ի դեմս արհեստակցական կազմակերպության ընտրովի մարմնի ղեկավար՝ արհկոմիտեի նախագահ Ա.Անդրիկյանի (հետագայում «Արհեստակցական կազմակերպություն»):

1.2 Կոլեկտիվ պայմանագիրը գործատուի (գործատուի ներկայացուցչի) և աշխատողների ներկայացուցիչների միջև գրավոր ձևով կնքված կամավոր համաձայնություն է, որը կարգավորում է աշխատողների և գործատուների միջև աշխատանքային հարաբերությունները:

1.3 Սույն կոլեկտիվ պայմանագրի առարկան գործատուի կողմից աշխատողների աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված սոցիալական ու իրավական հարցերի լուծման համար տրամադրվող երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համեմատ, լրացուցիչ դրույթների սահմանումն է:

1.4 Սույն կոլեկտիվ պայմանագրի դրույթներին իրականացնելիս գործատուն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև ՖԿՀՊԻ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով:

1.5 Կոլեկտիվ պայմանագիրը կոչված է բարելավելու աշխատողների աշխատանքային պայմանները: Աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման նպատակով կատարվող կամ պլանավորված բոլոր ծրագրերը, որոնք իրականացվում են կողմերի նախնական համաձայնությամբ, համարվում են կոլեկտիվ պայմանագրի անբաժան մաս:

1.6 Կոլեկտիվ պայմանագրի կողմերը պարտավորվում են համագործակցել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներով և իրականացնել աշխատողների և գործատուի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում: